



Լուս Անջելեսի մանկական հիւանդանոց
Ուսումնասիրութեան Մասնակցելու Համաձայնութիւն

Մասնակցողի Անուն՝ _____

Բժշկական գրառում #: _____ Ծննդեան Թւական՝ _____

Մենք ձեզ կամ ձեր երեխային խնդրել ենք ուսումնասիրութեան մասնակցելու: Ուսումնասիրութեան միջոցով գիտնականները (բժիշկներ, բուժքոյրեր եւ ուրիշ մասնագէտներ) փորձում են հասկանալ, թէ որոշ մարմնի անդամները ինչպէս են աշխատում եւ փորձում են նոր տեղեկութիւններ ստանալ: Ուսումնասիրութիւնը կարող է մարմնի աշխատելու, հիւանդութիւնների սկսելու պատճառների, հիւանդութիւնների բուժելու կամ մարդկանց մտածումներն ու զգացումները իմանալու նպատակով կատարւի:

Այս ուսումնասիրութեանը ձեր և ձեր երեխայի մասնակցելու մասին որոշում կայացնելուց առաջ, հետազօտիչը պէտք է հետեւեալ կետերի մասին ձեզ տեղեկ պահի.

- 1) Ուսումնասիրութեան նպատակների մասին, գործելակերպերի, տեղադրութեան մասին:
- 2) Որեւէ գործելակերպերի մասին, որոնք փորձնական են (քննում են):
- 3) Որեւէ հաւանական վտանգների, անհանգստութիւնների եւ ուսումնասիրութեան օգուտների մասին:
- 4) Որեւէ ուրիշ օգտակար գործընթացների կամ բուժումների մասին:
- 5) Ձեր անձնական տեղեկութիւնները ինչպէս են գաղտնի պահւելու:

Պէտք եղած պարագային, հետազօտիչը պէտք է ձեզ հետեւեալի մասին տեղեկ պահի.

- 1) Վնասւածքների պարագայում որեւէ վճարումների կամ բուժումների մասին:
- 2) Անյայտ վտանգների գոյութեան հաւանականութեան մասին:
- 3) Որեւէ պարագաներ, ուր հետազօտիչը կարող է ձեր մասնակցութիւնը դադարեցնի:
- 4) Որեւէ յաւելեալ ծախսեր:
- 5) Ինչ պիտի պատահի, եթէ որոշէք ձեր մասնակցութիւնը դադարեցնէք:
- 6) Երբ պիտի նոր տեղեկութիւնների մասին իմանաք, որով ձեր մասնակցութիւնը կարող է ազդի:
- 7) Քանի հոգի են մասնակցելու այս ուսումնասիրութեան:

Մասնակցութեան համաձայնելու պարագային, դուք պէտք է ստանաք այս փաստաթղթի ստորագրուած պատճէնը, նաեւ մասնակցելու համաձայնութեան հարցաթերթը, որը գրւած է Անգլերէն լեզուով:

Դուք կարող էք _____ հետ կապել _____ համարով, այս ուսումնասիրության մասին որեւէ հարցեր ունենալու պարագային կամ վնասվածքներ ստանալու պարագային:

Դուք ձեր իրաւունքների մասին հարցեր ունենալու պարագային կարող էք CHLA Մարդկանց Պաշտպանութեան Ծրագրի հետ 323-361-2265 հեռախօսահամարով կապել:

Դուք կամաւոր կերպով էք մասնակցում այս ուսումնասիրութեան (ձեր որոշումով), եւ չմասնակցելու պարագային կամ մասնակցութիւնը դադարեցնելու պարագային չէք պատժի կամ օգուտներ չէք կորցնի:

Այս փաստաթղթի ստորագրելը նշանակում է՝ այս ուսումնասիրութիւնը, վերոյիշեալ տեղեկութիւններով ձեզ բանաւոր կերպով բացատրել է եւ դուք կամաւոր կերպով համաձայն էք մասնակցելու:

Մասնակցողի Ստորագրութիւն

Թւական

Ծնողի Ստորագրութիւն (պէտք եղած պարագային)

Թւական

Անունը տպագրուած/Վկայի Ստորագրութիւն

Թւական

The witness's signature serves to attest that he/she provided the interpreting services and assisted with conveying explanation and questions and answers in the language spoken by the subject or the subject's parent/legal guardian.